

Այս տարեշրջանին մեր ուշադրութիւնը կը սեւեռենք մօտաւորապէս երկու դար անաչ այս հողերուն վրայ ծնունդ առած Հայ հոգեւոր, մշակութային կեանքի հսկաներէն մէկուն՝ Սկրտիչ Խրիմեանին՝ Պատրիարք, Կաթողիկոս, դաստիարակ, կամ հայ շինականին յորջորջումով «Հայրիկ»ին վրայ:

19րդ դարու երկրորդ կեսէն մինչեւ դարավերջ Պոլսահայ քաղաքական, հասարակական, մշակութային կեանքին մէջ արձանագրուեցաւ մեծ յառաջդիմութիւն: Այս շրջանը կոչուեցաւ Չարթօսքի՝ Վերածնունդի շրջան, իսկ շարժումը յառաջ բերող սերունդը՝ Չարթօսքի սերունդ: Խրիմեան Հայրիկ գաւառի ժողովուրդին տառապանքը ցոլացուց Պոլսոյ կեանքին եւ պայքարեցաւ անոր ազատութեան ու լուսաւորութեան համար: Հոգեւորական, դաստիարակ, գրագետ Հայրիկը նկատուեցաւ Չարթօսքի ռահվիրաներէն: Բիր յարգանք իր անմահ յիշատակին...

29 Նոյեմբեր 2010

Տնօրէնութիւն
Ազգ. Կեդրոնական Վարժարանի

ՅԱՅՏԱԳԻՐ

Բացում՝ *Միլլա Գոյումճեան (Տնօրէն)*

Բանախօս՝ *Տիանա Պուլտուր***

Թատերակ՝

Յակոբ Մամիկոնեան.... Կոմիտաս Վրդ.*

Արաս Սարքչօյան *..... Խրիմեան Հայրիկ*

Արեւ Կարեան (ԺԱ), Արեգ Իրեզլի, Անիթա Կէօքճէօղլու, Տիգրիս Տիվկերեան, (Ժ)

դաշնակ՝ Շանթ Էսմէր (Ժ)

Բանախօս՝ *Գարին Գարագաշըր***

Թատերակ՝

Գեվն Գարագուշ, Կարէն Օլկար, Պարէտ Պէքթաշեան, Մանէ Մալխասօղլու (Թ), Ռոյ Ասիկիկան (Ժ), Այգուն Էրալք, Արբուն Ճան Հիւլեար (ԺԱ)

Բանախօս՝ *Նաթալի Պաղտաս***

Թատերակ՝

Արթին Ճան Պահարօղլու, Եսթեր Հապէշ, Լէրան Իւլիէն, Լարա Թարաքճեան, Դալար

* Երաժշտութեան և Հայերէնի ուսուցիչ

** Հայերէնի ուսուցիչ

Շէքէր, Մելիսա Արսլանեան, Պուրչակ Էօզգարակէօզ, Մայաթ Բուլաթեան, Առլին Պաշկիւ, Գլօտին Տէղիբմենճի (ԺԱ)

Մանկիկներու Պատրաստութիւն՝

Ա. Մարկոսեան - Ս. Գոյումճեան

Խօսնակ՝ *Սարին Ազպաշ (ԺԱ)*

Չայնի Սարքաւորում՝

Արթօ Պաղտասարօղլու (ԺԱ)

Կրաֆիք Ձեւաւորում՝

Արլէթ Բնճիտիզէն

Պարախումբ՝

Միքայէլ Էօզնիկուրեան, Ժօէլ Արտա Երլմազ, Արման Սապահ, Մելին Շիշմանօղլու, Լարա Մեծատուր, Արեւ Պուչաքճը, Պարըշ Գապալաք, Արտէն Ազպըլըք, Սարվէն Պալճը (Թ), Միրէլ Տիգթաշ, Նարոտ Ալճան, Մելիսա Գէօուկօղլու (Ժ)

Պարուսոյց՝

Պանու Աչքքտէնիզ



190 ԱՄԵԱԿ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿ - ԳՐԱԳԷՏ

1820-1907



ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ, ՍՈՒՍԱՆԱՐԱՒ, 4 ՊԵՂՆԵՐԵՐ 2010

Ժամանակագրական Ուրուագիծ Հայրիկի Կեանքին

1820 Ապրիլ 4, ծնունդ՝ Վանայ Առճակ գիւղը	<i>Ծրագիրը</i> , կը հրատարակէ <i>Խաչի Ճառը</i> ու <i>Ժամանակ</i> և <i>Խորհուրդ Իւրը</i>
1847 Ուսուցիչ Պոլսոյ մէջ	
1850 Կը հրատարակէ <i>Հրաւիրակ Արարտեանը</i> : Ուխտատու կ'երթայ Երուսաղէմ	1877 Կը հրատարակէ <i>Վանգոյժը</i> և <i>Հայգոյժը</i>
1851 Կը հրատարակէ <i>Հրաւիրակ Երկրին Աւետեացը</i>	1878 Կը հրատարակէ <i>Դրախտի Ընտանիքը</i> . Կ'երթայ Պերլինի Վեհաժողովին
1852 Կ'այցելէ Կիլիկիա	1879 Կը հրատարակէ <i>Միրաք</i> և <i>Սամուէլը</i> Առաջնորդ՝ Վանի
1854 Վարդապետ կը ձեռնադրուի Ախթամար	1885 Կը վերադառնայ Պոլիս
1855 Պոլիս կու գայ Կը հրատարակէ <i>Արծուի Վասպուրական</i> ամսաթերթը	1886 Ատենապետ Կրօնական Ժողովի
1856 Վանահայր Վարագայ	1890 Երուսաղէմ կ'աքսորուի
1858 <i>Արծուի Վասպուրականը</i> կը հրատարակէ Վարագի մէջ	1892 Մայիս 5ին Ամենայն Հայոց Կաթողիկոս
1862 Առաջնորդ Տարօնոյ	1894 Կը հրատարակէ <i>Պապիկ</i> և <i>Թոռնիկը</i>
1863 Կը հրատարակէ <i>Արծուիկ Տարօնոյ</i> երկշաբաթաթերթը Մշոյ մէջ	1900 Կը հրատարակէ <i>Թագաւորաց Ժողովը</i> :
1866 Կը ճամբորդէ Պոլիս, ապա կը վերադառնայ Մուշ	1901 Կը հրատարակուի <i>Վերջալոյսի Չայները</i>
1867 Գեորգ Դ. Կաթողիկոսէ կը ձեռնադրուի եպիսկոպոս	1903 Չի գործադրեր եկեղեցական կալուածներուն գրաւման ցարական հրովարտակը, կը մերժէ յանձնել գանձարանն ու դրամարկը
1869 Կ'ընտրուի Պատրիարք Պոլսոյ	1904 Պատուիրակութեան մը պաշտօն կը յանձնէ դիմել Եւրոպայի արքունիքներուն
1873 Պատրիարքութենէ կը հրաժարի	1907 Պատուիրակութիւն կը դրկէ Լա Չէյի Խաղաղութեան Ժողովին և նամակ կ'ուղղէ Անգլիոյ թագաւորին
1874 Քարոզիչ՝ Գուգկունճուքի եկեղեցւոյ	Հոկտեմբեր 29ին կը վախճանի
1876 Գրի կ'աննէ <i>Բարենորոգմանց</i>	

«Ողջոյն ձեզ դաշտերու և լեռներու բնակիչներ, շինական երկրագործ ժողովուրդ, դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատաւոր մշակն էք, որ կը սիրէք հողն ու մաճը, դուք մեր նախահօր հարազատ որդին էք. երկրին մէջ գործեցէք և պահեցէք զայն, գիտնալով թէ միայն երկիրն է ձեր հայրենատուր ժառանգը»:

Խրիմեանի կաթողիկոսութեան անդրանիկ կոնդակէն (1893)



Վ.Ա.ԶԳԷՆ Ա.

Հայ գաւառացի ժողովուրդը պէտք ունէր առաքեալի մը շունչին ու խօսքին, յեղափոխականի մը շարժումին ու կենդանի գործին: Միալաճ պիտի չըլլանք եթէ ըսենք թէ այդ մեծագոյն յեղափոխականը մեր մէջ **Խրիմեան Հայրիկը** կը հանդիսանայ, թէ՛ իր կենդանի խօսքով, թէ՛ իր գործով:

Խրիմեան այս անօրինակ հոգեւորականը մենմենակ մի խորունկ խորհուրդ է: Նրա կեանքը, նիստուկացը, հագուելու, խօսելու եղանակը, նրա կերակուրներն անգամ՝ հոշակաւոր թանէ ապուրը անսահման հետաքրքրութեան նիւթ է: Նրա ամէն մի խօսք անքննադատելի ու վսեմ պատգամ:

Աւետիս Անարունեան

Չկար անոր համար ոչ իշխան, ոչ ծառայ, ոչ հարուստ, ոչ ալ աղքատ. ամէնքը միեւնոյն արժէքն ունէին անոր աչքին: Այս տեսակետով ան կատարեալ բանաստեղծ էր: Միայն մէկ բանի առաջ կը խոնարհէր անոր անկախ ու հպարտ հոգին՝ ժողովուրդը:

Ես հաւատացած եմ, որ մինչեւ մահ անջինջ և անաղարտ կը մնայ նա՝ **ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ** այդ մեծ, պատմական մարդը, երբեք չեմ կարող մոռանալ նրա հայեացքը, նրա ձայնը, այնպէս, այնպէս խորն է ազդել նա իմ հոգու վրայ:

Աւետիք Բահակեան

Մանուկ և հսկայ, հեզ և վիթխարի. ահա **Խրիմեանի** պատկերը: Հաւատալ խօսքի ոյժին, հաւատալ մտքի անյաղթելի ազդեցութեանը, հաւատալ ճշմարտութեան. ահա Մկրտիչ Խրիմեանի նշանաբանը:

Գրիգոր Արծրունի

ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



Պապիկ պապիկ, աչքդ լոյս, Թոռնիկ թագուր է եղեր. Մամիկ մամիկ, աչքդ լոյս, Շուշան քեզ հարս է եղեր:

Ապրին Շուշան և Թոռնիկ, Եւ ծերանան ի միասին. Օլին ծաղկին ինչպէս շուշան, Զուակներով և թոռնիկներով:

Պապկի տուն բարգաւաճի, Թոռնիկ լինի մեծ տանուտեր. Եւ էօմրըշատ լինի Պապիկ. Տեսնայ թոռանը ծոռեր:

Նահապետաց չափ թող ապրի, Հասնի մինչեւ խոր ծերութիւն, Մեռնի երթայ արքայութիւն:

Ուտենք վերջին հոգեճաշն իր, Յիշենք, օրինենք յիշատակն իր:

Հարսանեկան երգ՝
Պապիկ և Թոռնիկէն